

«ԵՐԳ ԵՐԳՈՑԻ» ԲՆԱԳԻՐՆ ԸՍՏ ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՑՈՒ ՄԵԿՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՑՈՒՑ ԱՐՎԱԾ ՔԱՂՈՒՄՆԵՐԻ

Բանալի բառեր՝ երգնկայի Աստվածաշունչ, նախակիրիկյան խմբագրություն, ընդօրինակություն, տարընթերցում, Վարդան Արևելցի, հեղինականիշ հղում, բնաբանային քաղվածք, ծաղկաքաղ մեկնություն, երգ երգոց, Գրիգոր Նարեկացի:

Հայագիտության մեջ մեծ համբավ է վայելում Հովհաննես Զոհրապյանի՝ 1805 թ. հրատարակած Աստվածաշունչը որպես Սուրբ Գրքի ամբողջական բնագրի միակ քննական հրատարակություն¹: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այս բնագիրը կազմվել է կիրիկյան միջավայրում ընդօրինակված ձեռագրերի հիման վրա, արտացոլում է Աստվածաշնչի կիրիկյան խմբագրության առանձնահատկություններ² և «Երգ երգոց»-ի նախակիրիկյան օրինակների հետ համեմատության համար շահեկան լինել չի կարող³: Այս առիթով Մեսրոպ Տեր-

* Մեսրոպ Մաշտոցի անվան Մատենադարան, ք. գ. ք., lilithovsepyan333@gmail.com, հոդվածը ստանալու օրը՝ 15 նոյեմբերի, 2025, հոդվածը գրախոսելու օրը՝ 10 դեկտեմբերի, 2025:

¹ Աստուածաշունչ մատեան Հին եւ Նոր կտակարանաց. ըստ ճշգրիտ թարգմանութեան նախնեաց մերոց՝ ի հելլենականն հաւատարմագոյն բնագրէ ի հայկականս բարբառ: Նորոգապէս ի լոյս ընծայեալ յընտրելագոյն գրչագիր գաղափարէ՝ համեմատութեամբ այլեւայլ օրինակաց՝ հանդերձ կարեւոր ծանօթութեամբք բնաբանին, յաշխատասիրութենէ տեառն Հ. Հովհաննէս Զոհրապեան վարդապետի, ի Վենետիկ, 1805. ՌՄԾԳ. (այսուհետեւ՝ Զոհրապեան Աստուածաշունչ):

² Աստվածաշնչի գրերը «ի մի տփի» միավորելու և ընդօրինակելու արդյունքում սուրբգրային բնագրի մեջ արվել են էական լրացումներ և փոփոխություններ. այդ մասին՝ Ն. Ակիմեան, «Սուրբ Գրքի հայերէն թարգմանութիւնը», ՀԱ, 1935, հոկտեմբեր-դեկտեմբեր, էջ 561: Մեր նպատակն է հրատարակել «Երգ երգոց»-ի նախակիրիկյան բնագիրը վաղ շրջանի ընդօրինակությունների և առանձին մեկնությունների (ըստ անհրաժեշտության նաև այլ, օրինակ՝ ձաշոցների, վաղ շրջանի փառոցների) բնաբանային փաղոմների հիման վրա: Սույն հոդվածն այդ աշխատանքի մեկ օղակն է:

³ Ինչպես Աստվածաշնչի մի ֆանի այլ գրերի, այնպես էլ «Երգ երգոց»-ի ընդօրինակությունների առնչությամբ ուսումնասիրողներն առանձնացնում են վաղագույն՝ «փութանակի» թարգմանության կնիք ունեցող բնագրեր. այդպիսի մի նմուշ տես Հ. Ոսկեան, *Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանութիւնը*, Վիեննա, 1924, էջ 75:

Մովսիսյանը կարևոր է համարում. «Հայկական վոլգատան անուանել կիլիկեան բնագիր եւ այն շնամարել հնագոյն տարբերակի իսկական ներկայացուցիչը: Սուրբ գրքի հայկական տարբերակի ապագայ հրատարակիչը պարտաւոր է շրջանցել կիլիկեան դարաշրջանը եւ մեզ տրամադրել հնագոյն տարբերակի բնագիրը (ընդգծումները մերն են՝ Լ. Հ.): Միայն այդպիսի բնագիրը կարող է յաւակնել գիտնականների լիակատար ուշադրութեանը եւ համարուել հինգերորդ դարի թարգմանիչների աշխատանք»⁴:

Ուսումնասիրությունների արդյունքում պարզել ենք⁵ Աստվածաշնչի «Երգ երգոց»-ի նախակիլիկյան խմբագրության առանձնահատկություններ ունեն Գրիգոր Նարեկացու «Մեկնութիւն Երգոց երգոյն» աշխատության (977 թ.)⁶ մեջ պահպանված բնագիրը և Երուսաղեմի Սուրբ Հակոբյանց վանքի ձեռագրատանը պահվող Երզնկայի Աստվածաշունչը (Եղմ. 1925)⁷: Որպեսզի պարզենք՝ Գրիգոր Նարեկացուց հետո «Երգ երգոց»-ի այս բնագիրը շրջանառվել է արդյոք և կամ ինչ փոփոխությունների է ենթարկվել, կարևոր ենք համարում հետևյալ հարցերը.

ա. Ինչպե՞ս են հարաբերակցվում Գրիգոր Նարեկացու և Վարդան Արևելցու մեկնությունները «Երգ երգոց»-ի բնաբանային քաղումների և մեկնողական խմաստների մակարդակում:

բ. Վարդան Արևելցին բազմակողմանի զարգացած և հայ մշակույթի ամենատարբեր կողմերին արձագանքող հեղինակ է: Հետաքրքիր է՝ արդյո՞ք նա անդրադարձել է Աստվածաշնչի բնագրի թարգմանությունների հարցին և կա՞ն արդյոք «Երգ երգոց»-ի բնագրի տարբերակները վերաբերող գիտարկումներ Վարդան Արևելցու Մեկնության մեջ:

⁴ **Տ. Մեսրոպ արք. Տէր-Մովսիսեան**, Պատմութիւն Սուրբ Գրոց հայկական թարգմանութեան, ռուսերենից թարգմանեց **Ա. Նահապետեան**, առաջաբանը գրեց, խմբագրեց եւ ծանօթագրեց **Գ. Տէր-Վարդանեան**, Ս. Էջմիածին, 2018, էջ 249:

⁵ **Լ. Հովսեփյան**, ««Երգ երգոց»-ը և Գրիգոր Նարեկացին», *ԲՄ* 30, 2020, էջ 93-108:

⁶ Մատենագիրք Հայոց, հ. Ժ, Գրիգոր Նարեկացի, Գրիգորի Նարեկայ վանքի վանականի Մեկնութիւն Երգոց երգոյն, բնագիրը պատրաստեցին **Ա. Ղազինեան, Լ. Յովսէփեան**, Անթիլիաս-Լիբանան, 2008, էջ 749-883 (օգտագործել ենք այս հրատարակությունը՝ «Նարեկացի, Մեկնություն» ձևով, իսկ բնագրային հղումների էջահամարներն արտացոլել շարադրամբին կից՝ փակագծերում):

⁷ Մայր ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց (այսուհետև՝ Յուցակ Երուսաղեմի), կազմեց **Նորայր եպս. Պողարեան**, հ. 6, Երուսաղեմ, 1972, էջ 401-416. Հմբ 1925 (այսուհետև՝ Երզնկայի Աստուածաշունչ), գրչության ժամանակ՝ 1269 թ., գրիչներ՝ Մխիթար, Հակոբ, Մովսես: Մատյանս եզակի է՝ որպես պատմական Հայաստանի առաջին ամբողջական «ի մի տփի» Աստվածաշունչ. **Շահն արքեպիսկոպոս Աճեմեան**, Յուցակ Աստուածաշունչ մատենանի հայերէն Ձեռագիրներուն, Լիզպոն, 1992, էջ CXV: Բնագրերի համեմատությունը տես **Լ. Հովսեփյան**, ««Երգ երգոց»-ը և Գրիգոր Նարեկացին» հոդվածում, էջ 102:

Այս հարցերի պատասխանները թույլ կտան պարզել «երգ երգոց»-ի (ուստի և՛ Հին Կտակարանի) բնագրի պատմության մասնավոր (ԺԳ դ.) օղակները՝ հնարավոր դարձնելով Վարդան Արևելցու Մեկնության մեջ ընդգծել եզակի ընթերցումներ, որոնք կարևոր են «երգ երգոց»-ի նախակիրիկյան բնագրի կազմման աշխատանքների համար:

«երգ երգոց»-ի մեկնողական ավանդույթը Գրիգոր Նարեկացուց հետո շարունակում է Վարդան Արևելցին. ըստ հորանաշատում ընդօրինակված ձեռագրի հիշատակարանի (ՄՄ 5452⁸, ԺԳ դ.՝ 1266-ից հետո)⁹ Մեկնությունը հեղինակել է 1265 թ. Հաղպատում՝ Կիրակոս Գանձակեցու խնդրանքով¹⁰: Ձեռագրերում հանդիպում է տարբեր խորագրերով. «Հաւաքումն ի մեկնչացն Վարդան վարդապետին երգ երգոցին» (ՄՄ 5452, հորանաշատ, 1ա), «Նռամեծի սրբոյ Վարդանայ վարդապետի արարեալ Պարզութիւն ի խնդրոյ շնորհազարդ վարդապետին Կիրակոսի երգոց ի երգոյն» (ՄՄ 4834, 1գ), «Մեկնութիւն համառօտ երգոյ երգոյն, զոր ժողովեալ է Վարդան վարդապետն ի տեսութեանց Գրիգորի Նիսացւոյն ոյն եւ Հիպոդիտեաւ չի Հռոմաւ չի հայրապետին եւ Որդիներաւ չի, եւ զոր յինքենէ, ի խնդրոյ Կիրակոս վարդապետին» (եղմ. 327, 241բ¹¹):

Հայ մեկնողական գրականության հարուստ ավանդույթը և Վարդան Արևելցու՝ կիրիկյան միջավայրի հետ ունեցած սերտ շփումները¹² հնարավորություն էին ստեղծում «երգ երգոց»-ի հայտնի և շրջանառվող մեկնություններն արտացոլել մեկ բնագրի մեջ¹³ կողք կողքի, ստանալ թե՛ բնաբանային հատվածների,

⁸ Հոդվածիս բոլոր հղումներն այս ձեռագրին են. էջահամարները շարադրամբին կից՝ փակագծերում:

⁹ «Ի քուիս յեալն հարիւրերորդի չորեքտասաներորդի (714+551=1265) եղև մեկնութիւն երգոյ երգոյս ի Վարդանաւ չի գիտնականէ՝ տիեզերայլու եւ յիմաստուն վարդապետէ, յաստուածամեծ սուրբ ուխտիս Յաղպատայ, ընդ հովանեաւ Սուրբ Նշանիս... Ի պատիարգութեան Հայոց Կոստանդնեայ եւ Հերմոյ պսակաւորին մերոյ եւ յարհիւպիսկոպոսութեան տեսուն Յովանիսի...», ՄՄ 5452, 65ա:

¹⁰ Հատվածաբար տպագրված Ընծայականը տե՛ս Յուզակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց Հ. Յակովբոս Վ. Տաշեան, Վիեննա, 1895, էջ 207-208: Վերջաբանը՝ Յուզակ երուսաղեմի, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. 2, Երուսաղեմ, 1967, էջ 200-202:

¹¹ Յուզակ երուսաղեմի, հ. 2, էջ 200. 1406 թ. ձեռագրի ընծայականը սրբագրված է և ավելացված Հիպոդիտոսի անունը:

¹² Վարդան Արևելցու կիրիկյան շրջանի գործունեության մասին տե՛ս Փ. Անթապյան, Վարդան Արևելցի, Կյանքն ու գործունեությունը, Գիրք Ա, Երևան, 1987, էջ 37-40: Նույնի՝ Գիրք Բ, Երևան, 1989, էջ 5-7, 20-22 և այլուր:

¹³ Լուսանցներում հիշատակված են Գրիգոր Նյուսացու, Գրիգոր Նարեկացու, Ռոզինես Ալեքսանդրացու, Հիպոդիտոս Բոստրացու անունները: Ձեռագրերի ընդօրինակություններից են՝ Թարեկի է, որ հեղինակին ի սկզբանե հասանելի չի եղել Հիպոդիտոսի անունով շրջանառվող բնագիր: Այսպես ենք ենթադրում, քանի որ վաղ շրջանի առանձին խումբ կազմող ընդօրինակություններ (ՄՄ 4066, 3697, 8159, 7898) չունեն հաղումներ Հիպոդիտոսից: Երկրորդ խմբի

թե՛ դրանց մեկնությունների ամբողջական, միաժամանակ համառոտ¹⁴ պատկեր: Ուստի խորագրերի թե՛ «հաւաքումն», թե՛ «պարզութիւն» և թե՛ «համառատ» բնորոշումները տեղին են և արտահայտում են մեկնության այս տեսակի ձևաբովանդակային կողմը: Վարդան Արևելցին դիմել է նորարարության¹⁵ և մեկնել «Երգ երգոց»-ը ծաղկաքաղ եղանակով¹⁶, այսինքն՝ նույն բնաբանի համար տարբեր հեղինակների մեկնությունների համապատասխան հատվածները զետեղել է կողք կողքի:

Հավաքում-մեկնության առավելությունները.

- Պատկերացում է տալիս միաժամանակ մի քանի մեկնությունների մասին,
- մեկտեղում է նույն բնաբանի՝ բոլոր մեկնիչների բացատրությունները,

ձեռագրերում հիպոդիտոսյան ֆաղումներն ավելացված են լուսանցներում՝ զոդված մասերում շարադրանքի անհարթություններ ստեղծելով (ՄՄ 5259, եղմ. 1317), իսկ երրորդ խմբի ընդօրինակություններում այդ հատվածներն արդեն ներմուծված են Մեկնության բնագրի մեջ (ՄՄ 5452, 4834 և այլն): «Երգ երգոց»-ի Հիպոդիտոս Բոստրացու և Որոգինեսի անունով հայտնի մեկնությունների հայերեն խմբագրություններ շրջանառվել են Կիլիկյան շրջանում (ՄՄ 4066, Անարգարա, 1283 թ.): Այս հեղինակների երկերը մեր կարծիքով (զուցե նրանց հայերեն երկերի երբեմնի գոյության փաստերը, կամ մոռացության վտանգը նկատի ունենալով) խմբագրել և շրջանառության մեջ է դրել Ներսես Լամբրոնացին (այս հարցին անդրադառնալու ենք առանձին հոդվածով): Հնարավոր է, որ հենց Կիլիկիայում եղած ժամանակ Վարդան Արևելցին ծանոթացել է այս բնագրերին (ոչ միաժամանակ) և այնուհետև զետեղել իր աշխատության մեջ:

¹⁴ Համատոտելու միտումը նկատելի է արդեն Նարեկացու Մեկնության մեջ: Խնդիրն այն է, որ Սողոմոն Իմաստունի այս երկի մեկնողական ավանդույթը հայ իրականության մեջ ձևավորել է Գրիգոր Նարեկացին՝ Գրիգոր Նյուսացու «Թուղթ յաղագս երցոց երգոյն» աշխատության ազդեցությամբ և մի փանի անգամ շեշտում է, թե համատոտում է Գրիգոր Նյուսացու երկը: Այս ակնարկը պետք է ընկալել ոչ միայն գրական առաջին հայերը կատարողի (ավելին՝ հայ իրականության մեջ «Երգ երգոց»-ը առաջին անգամ մեկնող հեղինակի) զգուշավորությամբ, այլ նաև այն առումով, որ մեկնությունները՝ որպես դասագրքեր, պետք է դյուրընկալելի լինեին, ուստի պարզ և դյուրահաս մեկնությունն ուսուցողական անհրաժեշտություն էր: Հասկանալի է, որ այս միտումն էլ ավելի նկատելի պիտի լինե՝ «Երգ երգոց»-ի մեկից ավելի մեկնություններից հատվածներ ի մի բերելու, ընկալելի դարձնելու դեպքում, ինչը և արել է Վարդան Արևելցին:

¹⁵ «Նորարարություն» պայմանական ենք համարում. Վարդան Արևելցու ուսուցիչ Վանական վարդապետն իր երկերում լայնորեն կիրառում էր ծաղկաքաղ մեկնությունը, որն էլ դարձավ դասագրքերը հյուսելու հիմնական եղանակ նաև իր աշակերտների համար. տե՛ս **Տե՛ր Արամ Բաճանա Միրզոյան**, «Վանական վարդապետի մատենագրական ժառանգությունը», *Խորանշատ 800*, խմբագիր՝ Վ. Թորոսյան, Երևան, 2022, էջ 34-35:

¹⁶ Նույն եղանակով է հյուսել նաև «Արարածոց» գիրքը. եղիշեի «Արարածոց մեկնութիւնը», խմբագրությամբ **Լ. Տեր-Պետրոսյանի**, Երևան, 1992, էջ 11, 22-81: *Մատենագիրք Հայոց, հ. Ա, Ե դար*, եղիշե, Արարածոց մեկնութիւն, բնագիրը պատրաստեց **Յ. Քեօսեկան**, Անթիպաս-Լիբանան, 2003, էջ 765-767:

- երևում են նույն բնաբանի տարբեր ընթերցումներ, պատկեր-խորհրդանիշի զարգացումներն ու իմաստային փոփոխությունները,
- արտացոլում է մեկնիչի գրական նախասիրությունները:

«Երգ երգոց»-ի նկատմամբ Վարդան Արևելցու հետաքրքրությունը միայն այս գործով չի սահմանափակվում: Մեկնողական երկու ընդարձակ հատված տեղ են գտել հանրագիտարանային արժեք ունեցող «Ժղլանք» երկում¹⁷: Առհասարակ մարդու ներաշխարհին առնչվող՝ Դավթի Սաղմոսների, Սողոմոնի երկերի ու որոշ մարգարեությունների մեկնաբանությունները¹⁸ շարունակաբար կիլիկյան գործիչների ուշադրության կենտրոնում էին, և զարմանալի չէ, որ Հեթում Ա-ն այս թեմայով նույնպես հարցեր է ուղղել Վարդան Արևելցուն:

Հայտնի է մեկնությունները դասագրքեր էին, և Վարդան Արևելցի մանկավարժին հավանաբար մտահոգել է նաև, որ սաները մեկ բնագրի միջոցով ուսումնասիրեն «Երգ երգոց»-ի մի քանի մեկնություն միաժամանակ, ծանոթանան նույն խորհրդանիշի տարբեր բացատրությունների հետ: Նա «Երգ երգոց»-ի ընդարձակ բնաբան-քաղվածքը դնում է մեկնողական հատվածի սկզբում, ապա մեկնում՝ մասնատելով այն փոքր հատվածների (լեմա): Մեկնության նման եղանակն ու կառուցվածքը հնարավոր են դարձնում պարզել «Երգ երգոց»-ի բնաբանային քաղվածքների բնույթը, Գրիգոր Նարեկացուց արված քաղումների շերտը՝ ներառյալ Աստվածաշնչի միայն հայկական կանոնին բնորոշ «Գիտացի, զի...» հատվածը¹⁹:

ա. Ինչպե՞ս են հարաբերակցվում Գրիգոր Նարեկացու և Վարդան Արևելցու մեկնությունները «Երգ երգոց»-ի բնաբանային քաղումների և մեկնողական իմաստների մակարդակում: Գրիգոր Նարեկացու անունը Վարդան Արևելցին առաջին անգամ հիշատակում է Մեկնության Կիրակոս Գանձակեցուն ուղղված առաջաբանում. «...Որ եւ քում ըղձիցն կցորդել հրամայեցեր... ի Գրիգորէ նիւսացլոյ, որ մեծն է աղբիւր եկեղեցլոյ լնուլ, առաջնորդութեամբ եւրիզինեա, համառօտ առեալ եւ գրիգորին ի սկզբանէ...» (ՄՄ 5452, 1ա):

¹⁷ ՄՄ 750, «Լուծմունք ի Սուրբ Գրոց Վարդանայ վարդապետի ի խնդրոյ բարեպաշտ թագաւորին Հայոց Հեթում», «Զի՞նչ է ասելն՝ ես շուշան եմ հովտաց եւ ծաղիկ դաշտաց» (Երգ երգոց, Բ 1), 100բ (այս հատվածի մեջ հիշատակում է Գրիգոր Նարեկացուն՝ «Նարեկեցի» անով: «Զի՞նչ է որ ասէ՝ Քոյր մեր փոքրիկ է» (Երգ երգոց Ը 8), 102ա:

¹⁸ **Լ. Հովսեփյան**, «Հիմնկտակաւանայան «Երգ երգոց»-ը որպէս 10-16-րդ դարերի միջնադարի հայ գրականության աղբյուր», *ՇՊՀ Գիտական տեղեկագիր*, № 2, Պրակ Բ, Հումանիտար ու հասարակական գիտություններ, դասավանդման մեթոդիկաներ, Գյումրի, 2019, էջ 50-51:

¹⁹ «Երգ երգոց»-ի բնագրի հնույթյան ցուցիչը «Գիտացի, զի...» սկսվածով հատակտորի դիրքն է. մեզ հայտնի հնագույն օրինակը պահպանված է Գրիգոր Նարեկացու Մեկնության մեջ՝ «Էկլեսիատես» խորագրով՝ բուն «Երգ երգոց»-ից առաջ, մինչդեռ կիլիկյան շրջանի բնագրերում դրված է «Երգ երգոց»-ի վերջին՝ Ը գլխից հետո «Այլուստ իմն գտեալ» հետսամուտ վերնագրով, որն առկա է Աստվածաշնչի, մասամբ նաև ճաշոցի **միայն հայերեն** ձեռագրերում:

Վարդան Արևելցին վստահաբար նկատի ունի Նարեկացի Գրիգորին. մեկնության ՄՄ 6720 ձեռագրի առաջաբանում գրիչը հավելում է. «Զմնացեալն յերգոյ երգոյն... առաջնորդութեամբ Որիգինեա եւ համառօտեալ եւ զայլս սակաւ ինչ եղեալ ի Գրիգորէ Նարեկացու...» (ՄՄ 6720, 88ա):

Նյուսացի և Նարեկացի Գրիգորների շփոթը կանխելու համար Վարդան Արևելցին Նարեկացու դեպքում կիրառում է «Նար.» / «Նր.» համառոտումը: «Համառօտ առեալ», «սակաւ ինչ եղեալ ի Գրիգորէ Նարեկացու» արտահայտությունները կարելի է ընկալել երկու իմաստով՝ Նարեկացիական քաղումների քանակը քիչ է Գրիգոր Նյուսացու և մյուս մեկնիչների համեմատ և կամ՝ Նարեկացուց արված քաղումներն էապես համառոտված են: Գրիգոր Նարեկացուց արված քաղումների սակավությունը բացատրվում է նրանով, որ այս երկը միակ հայ հեղինակի շրջանառվող և հայտնի մեկնությունն էր:

Ստորև՝ Վարդան Արևելցու Մեկնության մեջ Գրիգոր Նարեկացուց արված քաղումների համառոտ պատկերը՝ ըստ «Նար.» անվան հիշատակության²⁰.

«Երգ երգոց» Բնաբան	ՄՄ 5452 ²¹ (1266-ից հետո, Խորանաշատ. «Գիտացի, զի...» չիֆ)	ՄՄ 4066 (1283 թ., Անաուրգա. «Գիտացի, զի...» չիֆ)	ՄՄ 4834 (1289, 1296 թթ., Ս. Թեոդորոս վանք, Երզնկա. Ունի «Գիտացի զի...»)	ՄՄ 5259 (Ժ.Գ. Դ., ունի «Գիտացի, զի...»)
Համբուրեցէ զիս ի համբուրից բերանոյ իւրոյ... (Ա 1)	ՆԱՐ. Յորժամ նոր ծնաւ զմեզ զմկըրտութեամբ, ասեմք՝ համբուրեա զմեզ հայրենի սիրով... (4ա)	ԳԲ. ՆԱՐ. Ի համբուրելն զմեզ Տէրն արբցոյք զշուրն, որ ասաց. Թէ ոք ծարաւի իցէ, եկեացէ առ իս եւ արբցէ: Դարձեալ՝ իբր զանառակ որդին	ՆԱՐ. = 5452 (3բ)	ԳԲ. ՆԱՐ. = 4066 (9բ)

²⁰ Աղյուսակում արտացոլել ենք Գրիգոր Նարեկացու անվան հիշատակումների ամբողջական պատկերն ըստ ՄՄ 4066 ձեռագրի, որտեղ ՆԱՐ. նշումը ճշգրտորեն արտացոլված է. ///-ով ցույց ենք տվել բացթողումները, *-ով նշված են նարեկացիական այն հատակտոմները (հեղինականիշ հղումով, կամ առանց դրա), որոնք Հիպոդիտոսից փաղումներ ավելացնելու պատճառով ՄՄ 4066 ձեռագրի համեմատ տեղաշարժվել և բնագրի այլ հատվածներում են հայտնվել: Փակագծերում արտացոլված են համապատասխան հատվածների էջերը:

²¹ Սա և մյուս երեք «Երգ երգոց»-ի Վարդան Արևելցու Մեկնության բնական բնագրի համար ընտրված ձեռագրերն են:

		Համբուրենցի զմեզ այսաւր... ²² (194ա)		
Զի քաղցր են ստինք քո քան զգինի... (Ա 1)	ՆԱՐ. Կաթն կեն[դ]անութիւն տա տղայոյն (այսպէս), իսկ գինին՝ զարուծիւն եւ ուրախութիւն. Ոմանց կաթն տղա[յ]ոցն ի Քրիստոս եւ կիսոց՝ գինի... (4ա) ²³	ՆԱՐ. փիւ. ունի ԳՐ. ՆՅ. /// Ոմանց կաթն տղայոցն ի Քրիստոս եւ կիսոց՝ գինի (194բ)	ՆԱՐ. Կաթն կեն- դանութիւն տա տղայոցն, իսկ գինին՝ զաւ- րութիւն եւ ուրա- խութիւն/// (4ա)	ԳՐ. = 4066 (10աբ)
Եւ թափեալ է անուն քո... (Ա 2)	/// *Դարձեալ եղն յաման թափեալ չերեւի, իբր աստուածութիւն Տեառն ի մարմինն... (5ա)	ՆԱՐ. Դարձեալ եղն յաման թափեալ չերեւի, իբր աստուածութիւն Տեառն ի մարմինն... (194բ)	ՆԱՐ. = 4066 (4բ)	/// *Իւղ աստուածու թեանն թափեալ ի բնութիւնս մեր... (11ա)
Եթէ ոչ ծանիցես զանձն քո... (Ա 8)	/// Ոչ դու անձամբ փրկեցար, այլ ի Տեառնէ ըստ Դաւթի (9ա)	ՆԱՐ. Կամ զհեթանոսաց եկեղե- ցին նմանեցուցանէ. Հրէա- կան եկեղեցոյն. Յորժամ սրբեցաւ և ել յեգիպտոսէ... (197ա)	ՆԱՐ. Ոչ դու անձամբ փրկեցար, այլ ի Տեառնէ (8ա): Հմմտ. 5452	/// = 4066 (էջ 18բ)
Ես ծաղիկ դաշտաց, շուշան հովտաց... (Բ 1)	ՆԱՐ. Դարձեալ որպէս դաշտ զանազան ծաղկաւք՝ երկիր ամենայն Տեառն երեւմամբն... (14բ)	/// ...որպէս դաշտ զանազան ծաղկաւք՝ երկիր Տեառն երեւմամբն... (199ա)	ՆԱՐ. = 5452 (12բ)	ՆԱՐ. = 5452 (23բ)
Շուշան ի մէջ փշոց... (Բ 2)	/// Եւ դարձեալ զի եւ գեղեցիկ եւս երեւին լաւքն ի մէջ վատացն, որպէս տանուտէրն չես հրաման քաղել զորոմն (15ա)	ՆԱՐ. Որպէս տանուտէրն չես հրաման քաղել զորոմն, զի եւ գեղեցիկ երեւին լաւքն ի մէջ վատացն... (199բ)	/// = 5452 (13ա)	ՆԱՐ. = 4066 (24ա)

²² ՄՄ 4066-ը (նման՝ ՄՄ 5259) «Նար.» հեղինականիշ հղումին կից ունի այլ մեկնություն:

²³ Նյութի ուղեանցումից խուսափելու նպատակով հատվածները հնարավորինս համառոտել ենք:

Պտուղ նորա քաղցր է ի կոկորդի իմուս... (Բ 3)	/// Այլ եւ զպտուղ է հաղորդութիւնն քաղցր կարի գիտնոցն (15բ)	ՆԱՐ. Պտուղ է հաղորդութիւնն Քրիստոսի մարմնոյն եւ քաղցր է կարէ գիտողացն... (199բ)	/// = 5452 (13ա)	/// = 4066 (24բ)
Մուծէք զիս ի տուն գին[ւ]ոյ... (Բ 4)	/// Զառաքելոցն հայցէ, Հհաւանի մարգարէիցն շնորհի... (15բ)	ՆԱՐ. Զառաքելոցն հայցէ զշնորհն, Հհաւանի մարգարէիցն շնորհի... (199բ)	/// = 5452 (13աբ)	ՆԱՐ. = 4066 (25ա)
Զի խանդակաթ եմ ես սիրով... (Բ 5)	ՆԱՐ. եւ դարձեալ խանդակաթ. սուրբքն ո՛չ յագէին, յայլոցն խոցոտեալ յանձնէ՛ եւս յաւելոյին, իբր Պաւղոս, որպէս մեր Հուսաւորիչն... (16բ)	ՆԱՐ. Խանդակաթ սիրով է, զի սուրբքն ո՛չ յագէին, յայլոցն խոցոտեալ յանձնէ՛ եւս յաւելին, որպէս Պաւղոս եւ որպէս մեր Հուսաւորիչն... (200ա)	ՆԱՐ. = 5452 Ունի մինչև՝ ...յայլոցն խոցոտեալ/// (13բ)	ՆԱՐ. * = 5452 սուրբքն՝ չիք (24ա)
Երգմենացանե մ զձեզ, դստերք երուսաղէմի, ի զարուրթիւնս եւ յուժգնութիւնս անդաստանի... (Բ 7)	ՆԱՐ. Անդաստան՝ երկինք եւ երկիր, զարուրթիւն՝ Աստուած, որով արար, ուժգնութիւն՝ պահելն ի նոյնութեանն (17ա)	ՆԱՐ. Անդաստան՝ երկինք եւ եր- կիր, զարուրթիւն՝ Աստուած որ արար, ուժգնութիւն՝ պահելն ի նոյնութեան (200ա)	ՆԱՐ. = 5452 (14ա)	ՆԱՐ. = 4066 (26ա)
Գահաւորակ արար իւր արքայ Սողոմոն... (Գ 9)	/// Այլեւ հեթանոսք փայտք կիբանանու մանրեցան... (25բ):	ՆԱՐ. Այլեւ հեթանոսք փայտք կիբանանու մանրեցան... (203բ)	/// = 5452 (20ա)	/// = 5452 (34ա)
Ահաւազիկ կաս գեղեցիկ, ահաւազիկ կաս գեղեցիկ... (Դ 1)	/// Միամիտ հարսն եւ կրկին գեղեցիկ աւազանաւն... (27բ):	ՆԱՐ. Միամիտ հարսն եւ կրկին գեղեցիկ աւազանաւն... (204բ)	/// = 5452 (21ա)	/// = 5452 (36ա)
Ամենեքեան երկուորիք են... (Դ 2)	/// ...զի բազում են որդիք սկընդկիդ, քան զարամբոյն... (28բ):	ՆԱՐ. ...զի բազում են որդիք սկընդկիդ, քան զարամբոյն... (204բ)*	/// = 5452 (22ա)	ՆԱՐ. * = 4066 (36բ)

Իբրեւ զլար կարմիր են շրթունք քո... (Դ 3)	/// ...վասն որոյ լարովն՝ զսէրն միաւորական. եւ կարմրովն զհաւատն է իմանալ... (29ա):	ՆԱՐ. ...վասն որոյ լարովն՝ զսէրն միաւորական, եւ կարմրովն զհաւատն է իմանալ...(204բ)	/// = 5452 (22ա)	/// = 5452 (37աբ)
Առանց լռութեան... (Դ 3)	/// Գիտութիւն, զոր ունիս արդ, զատ անտի է, որ լռեալ է արդ... (29բ):	ՆԱՐ. Գիտութիւն, զոր ունիս արդ, զատ անքի է, որ լռեալ է այժմ...(205ա)	/// = 5452 (22բ)	ՆԱՐ. = 4066 անդի փիւ. անտի (38ա)
Սրտացուցեր միով ականք քով... (Դ 9)	/// Ակն մի է, որ եւ սակաւ տեսանէ զայս աշխարհ... (32ա):	ՆԱՐ. Ակն մի է, որ սակաւ տեսանէ զայս աշխարհ... (206ա)*	/// = 5452 (24բ)	ՆԱՐ. * = 4066 (40բ)
Արի հիւսիսի եւ եկ հարաւ... (Դ 16)	/// Ել ի համարձակութիւն հարսն... (34բ):	ՆԱՐ. Ել ի բարձր համարձա- կութիւն հարսն... (207ա)	/// = 4066 (26աբ)	/// = 4066 (43ա)
Գեղեցիկ ես իբրեւ զանուշահոտու թիւն... (Զ 3)	/// Որպէս Տէրն հիացաւ ընդ հաւատս հարիւրապետին... (43ա):	ՆԱՐ. Որպէս Տէրն հիացաւ ընդ հաւատս հարիւրապետին... (210բ)	/// = 5452 (33ա)	/// = 5452 (53բ)
Դարձոյ զաչս քո յինէն... (Զ 4)	/// Յառաւել քննելոյն զիս իբր Մովսէս ի դնելն զնա ի ծերպ վիմին... (43բ):	ՆԱՐ. Յառաւել քննելոյն զիս իբր Մովսէս ի դնելն զնա ի ծերպ վիմին...* (210բ)	/// = 5452 (33բ)	/// * = 4066 (54ա)
Վաթսուն են թագուհիք եւ Զ. հարճք... (Զ 7)	/// Անդրանիկք են եւ թագուհիք, յորում եկն Քրիստոս, եւ որք անտի մինչեւ ի յութ դարն գան... (44բ):	ՆԱՐ. Անդրանիկք են եւ թագուհիք եւ որք անտի մինչեւ ի յԼ. դար գան...* (211ա)	/// = 5452 (34ա) Անդրանիկք են փիւ.՝ անդրանիկք եղեն	/// * = 5452 (55բ)
Ո՛վ է սա որ եկանէ իբրեւ զառաւատ, գեղեցիկ իբրեւ զլուսին... (Զ 9)	/// Զայս Տէրն ասաց՝ Ծագեցին արդարքն իբրեւ զարեգակն յարքայութեան... (46ա):	ՆԱՐ. Զայս եւ Տէրն ասաց՝ Ծագե- ցին արդարքն իբրեւ զարե- գակ յարքայութեան... (211բ)	/// = 5452 (35ա)	/// = 5452 (56բ) չնչագիծ

Ի պարտէզ ընկուզեաց իջի՝ հայել յարմտիս ուխից... (Ձ 10)	/// Պարտէզ՝ աշխարհս, ընկուզ՝ մարգս, որ պատեալ է հոգի մարմնովս... (46բ):	ՆԱՐ. Պարտէզ՝ երկիր, ընկուզ՝ մարգ, որ պատեալ է հոգի մարմնով... (211բ)	/// = 5452 (35բ)	/// = 5452 (57բ)
Ձի զեղեցկացան գնացք կաշկաւքդ, դուստր Ամինադաբայ... (է. 1)	/// Որպէս ոտքն ամրացան կաշկաւք, նոյնպէս եւ ծունկքն՝ կթոտ մեղաւք հաստատեցան արդարութեամբ... (48ա):	ՆԱՐ. Որպէս ոտքն ամրացան կաշկաւք, նոյնպէս եւ ծունկքն գթոտ մեղաւք հաստատեցան արդարութեամբ... (212ա)	/// = 5452 (37ա) կթոտ > գթոտ	/// = 5452 (59ա)

(աղ. 1)

Դիտարկված օրինակները ցույց են տալիս՝

- Գրիգոր Նարեկացու Մեկնությունից արված քաղումների եզակի օրինակ է ՄՄ 4066 ձեռագիրը (աղ. 1), որտեղ «Նար./Գր. Նար.» հեղինականիշ բոլոր հղումները խնամքով նշված են Գրիգոր Նյուսացուց և Որոգիներից հետո, ինչպես և ըստ Մեկնության առաջաբանի նախատեսել էր Վարդան Արևելցին:
- Հիպոդիտոսից քաղումներ չունեցող ձեռագրերում (առաջին խումբ՝ ՄՄ 4066, 5259) Գրիգոր Նարեկացուց արված անվանական քաղումները շատ ավելին են. այլ խմբի ընդօրինակություններում (ՄՄ 5452, 4834) մեկնողական հատվածներն առկա են առանց «Նար.» հեղինականիշ հղումի կամ ՄՄ 4066 ձեռագրի համեմատ տեղաշարժված են:

Վարդան Արևելցու երկում Նարեկացիական քաղումները հնարավորինս բառացի են, և, ինչպես հեղինակն արկնարկում է առաջաբանում, զգալիորեն համառոտված. այս առանձնահատկությունը բխում է մեկնության քաղածո եղանակի առանձնահատկություններից²⁴:

²⁴ Այս առիթով Ոսկյանը նկատում է. «[Մեկնությունների մէջ] նա աւելի հաւաքող եւ դասաւորող կը հանդիսանայ քան իբրեւ մեկնիչ: Բայց ի հարկէ լոկ այս տեսակետէ ալ նկատելով անօր հայկական մատենագրութեան ընձեռած նպաստը մեծ է եւ գնահատելի...», Հ. Ոսկեան, «Վարդան Արևելցի», ՀԱ, 1921, 9-10, էջ 466:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, ՄԵԿԵՆՈՒԹՅՈՒՆ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, ՄՄ 5452
Ա. Արդ, քանզի ծնաք նոր ծնունդ, աղաչեմք ծնողն՝ <u>մարական սիրովն համբուրել զմեզ...</u> (771): Նա եւ անառակ որդին գոլով՝ մեք <u>համբուրիմք լերկնաւոր Հաւրէն...</u> (772):	ՆԱՐ. Յորժամ նոր ծնաւ զմեզ մկըրտութեամբ. ասեմք՝ <u>համբուրեա զմեզ հալրենի սիրով (4ա):</u>
Բ. Զի <u>գլխիւն</u> , որ ի ստենէ բղխէ, <u>կենդանութեան է պատճառ, իսկ գինին՝ միայն զօրութեան (772):</u>	ՆԱՐ. <u>Կաթն կենդանութիւն տա տղաւիդն, իսկ գինին՝ զաւրութիւն եւ ուրախութիւն (4ա):</u>
Գ. Ո՞վ զանչափ հանդիսիւ սէրն, որ առ սուրբսն բնականաց ի ձեռն Քրիստոսի գալստեանն, որ <u>անլազ եղեն</u> , որ զայն համ սիրովն ճաշակեցին, զի ոչ բաւականացան պէսպէս նեղութեամբն, զոր կրեցին կա՛մ ի սատանայէ, կա՛մ ի ի սատանայացեալ մարդկանէ, այլեւ յանձանց եւս անբաւ յաւելուին նեղութիւնս, մարգարէին Դաւթի նմանեալ, որ ի յայլոց նեղութեանց վերայ, զոր ասաց թէ... <u>«Ջնեղութիւն եւ զանձկութիւն գտի»</u> : Որպէս սուրբ Լուսաւորիչն եւ մեծն Պաւղոս եւ այլք սուրբք նոցին նմանք, պարգեւս զնեղութիւնս... (784):	ՆԱՐ. եւ դարձեալ խանդակաթ. <u>սուրբքն ոչ լազէին խոցոտեալ յանձնէ եւս յաւելուին. իբր Պաւղոս, որպէս մեր Լուսաւորիչն, րստ մարգարէին, թէ «Ջնեղութիւն եւ զանձկութիւն ես գտի» (16բ):</u>
Դ. Անդաստան՝ աշխարհս կոչի, նա եւ երկինք. եւ զօրութիւն եւ ուժգնութիւն անդաստանի՝ <u>Աստուած, որով հաստատեցաւ աշխարհ եւ երկինք. եւ կա սեղմեալ եւ աղիսեալ անշարժ զօրութեամբն եւ ուժգնութեամբն անդաստանի, այսինքն՝ Աստուծոյ (785):</u>	ՆԱՐ. Անդաստան՝ երկինք եւ երկիր, զաւրութիւն Աստուած, որով արար, <u>ուժգնութիւն, որով պահէ ի նոյնութեանն (17ա):</u>

(աղ. 2)

Համեմատությունից երևում է, որ Վարդան Արևելցին ուղիղ ձևով չի հետևում Նարեկացուն, ավելի շատ համառոտում է քաղումներն այնպես, որ նարեկացիական բնագրի իմաստները չեն տուժում, և իր Մեկնության մեջ ճանաչելի են: Օրինակ, ինչպես տեսնում ենք, մեկնիչը սեղմել է Բ. Քաղվածքը, սակայն պահպանել է Գրիգոր Նարեկացու ոճը: Գ. հատվածի մի շարք մասեր փոխանցված են բառացի. Դավիթ մարգարեի «Ջնեղութիւն եւ զանձկութիւն գտի» արտահայտությունը՝ առանց անվան հիշատակության (Նարեկացին նշում է Դավթի անունը): «Անյազ եղեն» արտահայտությունը դարձել է «ոչ լազէին»: Այնուհետև՝ թվարկված են սրբերը՝ Պողոսը, Գրիգոր Լուսավորիչը, վերջինս՝ կրկին

առանց անվան հիշատակության: Արևելցին նախընտրել է «Մեր Լուսաւորիչն» ձևը, ինչպես Գրիգոր Նարեկացին²⁵:

Վարդան Արևելցու Մեկնության ձեռագրերի համեմատությունը ցույց է տալիս հետևյալը.

- Գրեթե բոլոր ձեռագրերում առանց բացառության արտացոլված է Գրիգոր Նարեկացու միայն չորս անվանական հղում (աղ. 2):
- Հեղինականիշ հղումների համեմատությունը ենթադրել է տալիս, որ հիպոդիտոսյան քաղումները գետեղվել են ավելի ուշ՝ Գրիգոր Նարեկացուց արված քաղումներից հետո կամ դրանց փոխարեն՝ «Հիպ.» նշումով: Արդյունքում՝ Վարդան Արևելցու Մեկնության ձեռագրերում հիպոդիտոսյան քաղումներն ու դրանց հեղինականիշ հղումներն ավելի խնամքով են ընդօրինակված: Նման մոտեցումը չի նշանակում, որ այս երկը Գրիգոր Նարեկացու Մեկնությունից ավելի մեծ պահանջարկ ունեն: Պարզապես Գրիգոր Նարեկացու երկերը շատ ընդօրինակված, լայնորեն շրջանառված են եղել: Այնինչ Հիպոդիտոսինը բոլորովին նոր երևույթ էր, և Վարդան Արևելցու նպատակը գիտական նորույթի արժեք ունեցող այս բնագրի հետ ընթերցողին ծանոթացնելն էր:

բ. «Երգ երգոց»-ի բնաբանային տարընթերցումները Վարդան Արևելցու Մեկնության մեջ: Քաղածո մեկնությունն ակնհայտ է դարձնում մի իրողություն՝ «Երգ երգոց»-ի բնաբան-քաղվածքները միօրինակություն չունեն. պատճառն այն է, որ տակավին Վարդան Արևելցու ժամանակ Աստվածաշնչի մեկ՝ ընդհանրական բնագիր չի կիրառվել. ավելին, իր ձեռքի տակ եղած միակ հայ հեղինակի՝ Գրիգոր Նարեկացու Մեկնության մեջ պահպանված բնագիրն էլ իր հերթին ներկայանում է բոլորովին այլ կառուցվածով («Էկլեսիատես» խորագիրը կրող հավելյալ մասով):

Մեկնության մեջ տարբեր ակնարկներ վկայում են, որ Վարդան Արևելցու ժամանակ Աստվածաշնչի տարբեր թարգմանություններ կիրառվել են, ուստի և նա բավականին հանգամանորեն անդրադառնում է «Երգ երգոց»-ի բնաբանային այլապատկերություններին.

²⁵ Գրիգոր Նարեկացի, Մեկնություն. «... եւ առաւելաւն եւ մեր Լուսաւորիչն Գրիգոր», էջ 840: «Որպէս ասէ Լուսաւորիչն մեր Գրիգոր», էջ 829: «...սուրբ Գրիգոր Լուսաւորիչն մեր ասէ», էջ 829:

ա. «Գուցէ լինիցիմ իբրեւ զընկեցեալն ի հաւտից ընկերաց քոց»²⁶ [Ա 6] ... Կամ որպէս այլ թարգման ասէ. «Գուցէ լինիցիս իբրեւ զարդարեալ ի հաւտից ընկերաց քոց»²⁷: Այսինքն՝ լինիցիս զարդարեալ այնպիսի փառաւք, զի...» (Տա)²⁸:

բ. «Եւ դու զհետ գարշապարաց հաւտիցն եւ արածեայ զուս քո ի վրանս հովուաց»²⁹ [Ա 7] ... Զոր այլ թարգման ասէ. «Եւեր դու արածել զուս ի տաղաւարս հաւտից». որպէս եւ ի փարախն երեւի յոր երթայքն...» (Գաբ):

գ. «Դարձի՛ր, դարձի՛ր սոմնացիդ...»³⁰ [Զ 11-12] ... Բայց այլ թարգմանքն՝ «Դարձի՛ր ողորդմացիդ»³¹ ասեն: Եւ ասի՝ յողորմ քաղաքի լինել քնարահարս եւ երգեցողս արուէստաւորս եւ կաքաւողս...» (47բ):

դ. «Փախի՛ր, եղբարորդեակ իմ...»³² [Ը 14]... Զոր այլ թարգման «դարձի՛ր», ասէ, «եղբարորդեակ իմ» ասէ... միւս անգամ ի դատաստան զգենուլ գեղեցկութիւն հարսինն եկեղեցույ (63ա):

Կասկած չկա, որ Վարդան Արեւելցին կարեւորել է «Երգ երգոց»-ի բնագրի տարբերակները. ավելին, նա անգամ մեկնիմաստներն է հարմարեցրել բնագրի այլասացություններին: Սա նշանակում է, որ «Երգ երգոց»-ի բնագրի հակասությունները որպէս այդպիսիք չեն ընկալվել և ներմուծվել են մեկնության մեջ՝ որպէս սուրբգրային բնագրի ընդունելի և կիրառելի տարբերակներ:

Նարեկացի-Արեւելցի առնչությունը «Երգ երգոց»-ի բնաբանային քաղումների սահմաններում.

Վարդան Արեւելցի, ՄՄ 5452	Գրիգոր Նարեկացի, Մեկնություն
Մի՛ հայիք յիս, զի ես եմ սեւացեալ, զի <u>անտես արաք</u> զիս արեգակն ³³ (6բ):	Մի՛ հայիք ընդ իս, զի ես սեւացեալ թխացայ, քանզի <u>լսեթիւ հալեցաւ</u> ընդ իս արեգակն (774):

²⁶ Հմմտ. Զոհրապեան Աստուածաշունչ. «Գուցէ լինիցիմ իբրեւ զընկեցեալն յերամակս ընկերաց քոց», էջ 409:

²⁷ Հմմտ. Երզնկայի Աստուածաշունչ. «Մի՛ գուցէ լինիցիմ որպէս զարդարեալ յերամակս ընկերաց քոց», 396բ:

²⁸ Այս և հաջորդ մեջբերումները՝ ՄՄ 5452 ձեռագրից:

²⁹ Հմմտ. Զոհրապեան Աստուածաշունչ. «Եւեր դու զհետ գարշապարացն հաւտից, եւ արածես զուս քո ի վրանս հովուաց», էջ 459: Հմմտ. Երզնկայի Աստուածաշունչ. «Եւ՛ դու զհետ գարշապարաց հաւտից եւ արածես՝ զուս քո ի վրանս հովուաց», 396բ:

³⁰ Հմմտ. նույն տեղում. «Դարձի՛ր, դարձի՛ր սովմնացի» (ո-ն և ց-ն՝ կարմրով), 398ա:

³¹ Հմմտ. Զոհրապեան Աստուածաշունչ. «Դարձի՛ր ողորդմացիդ, դարձի՛ր, դարձի՛ր եւ տեսցուի մե՛ք ի քեզ», էջ 462:

³² Վարդան Արեւելցին ունի նաև «Փախի՛ր եղբարորդի իմ...» տարբերակը. ՄՄ 5452, 63բ. այս նույնը՝ Զոհրապեան Աստուածաշունչ, էջ 463, Երզնկայի Աստուածաշունչ, 398բ:

³³ Հմմտ. Երզնկայի Աստուածաշունչ. «Վասն զի անտես արար զիս արեգակն», 396բ:

(աղ. 3)

Վարդան Արևելցին «Մի՛ հայիք յիս, զի ես...» (Երգ երգոց, Ա 5) հատվածը մեկնելիս (աղ. 3) գրում է. «Զէի, ասէ, սեւ յորժամ եղէ, այլ ես սեւացա[յ] անձնիշխան կամաւք. եւ յաւժարութեամբ. զի անտես արար զիս արեգակն. որ է թոյլ տալն զնալ ի պատրանս աւծին. եթէ արեգակն զԱստուած իմանաս: Իսկ թէ ըստ միւս թարգմանին՝ խեթի[ւ] հա[յ] եցաւ ասելոյ՝ զսատանա[յ] է ասել... խեթի[ւ] հայեցաւ մինչեւ սեւացոյց զնա. եթէ արեգակն կոչի վասն խորշակահար եւ սեւ առնելոյն...» (6բ-7ա):

Այստեղ անդրադարձ կա Նարեկացու Մեկնությանը՝ առանց հեղինակի անվան հիշատակության: Նարեկացին «արեգակն» խորհրդանշը մեկնում է Գրիգոր Նյուսացուն ճիշտ հակառակ իմաստով: Ըստ Նարեկացու՝ արեգակը Աստծու խորհրդանշն է. «... զի յանցանս ըմբռնելով իմ, խեթիւ հայեցաւ յիս արեգակնն՝ Աստուած» (774). ըստ Գրիգոր Նյուսացու՝ արեգակը սատանայական փորձություններն են. «Փորձութիւնս մեկնութեամբ անուանէ զարեգակնն»³⁴: Ինչպես տեսանք, Վարդան Արևելցու Մեկնության բերված հատվածից, հեղինակը «արեգակն» բառի մեկնության երկու տարբերակներին էլ անդրադարձել է:

Վարդան Արևելցին բնաբանային քաղվածքներն ու տարբերակները արտացոլում է երկու կերպով.

ա. Հեղինակն ընտրում է բնաբանի մի տարբերակը, իսկ տարբերակները արտահայտում է մեկնության մեջ:

1. «Անտես արար» (Երգ երգոց, Ա 5) – «խեթիւ հայեցաւ»

2. «Խանդակաթ» (Երգ երգոց, Բ 5) – «խոցոտեալ»

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ	ԳՐԻԳՈՐ ՆՅՈՒՍԱՅԻ
Զի <u>խանդակաթ</u> եմ ես սիրով (Բ 5)	Զի <u>խոցոտեալ</u> սիրով եմ ես (67ա):
Վարդան Մեկն. «Եւ դարձեալ <u>«խանդակաթ»</u> ,... Խանդ, որ է նախանձ սիրոյ փեսային, կաթեաց յիս: Կամ <u>«խոցոտեալ սիրով եմ ես»</u> , որ է քաղցր, վեր եւ պարծելի» (16բ):	

(աղ. 4)

3. «Սրտակաթ արարեր» (Երգ երգոց, Դ 9) – «սրտացուցեր».

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ	ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
<u>Սրտակաթ արարեր</u> միով ականք քո (31բ):	<u>Սրտացուցեր մեզ</u> միով ականք քով (803)
Մեկն. «Հոգիացուցեր կամ <u>սրտակաթ արարեր</u> , սիրտ ի մեզ եղէր... դարձեալ <u>սրտացուցեր միով ականք</u> » (32ա):	

³⁴ ՄՄ 1013, Գրիգոր Նիսացի, Թուղթ Յաղագս Երգոց երգոյն, 51ա:

(աղ. 5)

4. «Պատուհան» (Երգ երգոց, Ե 4) – «ծակ».

ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ	ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ
Եղբարորդին իմ ձգեաց զձեռն իւր ընդ <u>պատուհանն</u> (37ա).	Եղբարորդին իմ ձգեաց զձեռն իւր <u>քնք ծակն</u> ³⁵ , եւ որովայն իմ խռովեցաւ ի նա (818):
Մեկն. «Եղբարորդին իմ յիրեաց զձեռն իւր ընդ <u>պատուհանն</u> հան: Կամ ընդ <u>ծակ</u> մի, որ է աչք տեսող երեւելի գոյիս» (37ա):	

(աղ. 6)

բ) Հեղինակը Մեկնության գլխավոր բնաբանի մեջ կողք կողքի դնում է բնագրի տարբերակները:

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ, ՄԵԿ-ՆՈՒԹՅՈՒՆ	ՋՈՀՐԱՊԵԱՆ ԱՍՏՎԱԾԱՇՈՒՆՉ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ, ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ
Առաքումն քո դրախտ նունենեաց ³⁶ (Դ 13):	Պատգամաւորութիւն քո հանդերձ նարդոսիւ (462):	Առաքումն քո դրախտ նունենեաց կամ պատգամաւորութիւն քո հանդերձ նարդոսիւ (33բ):

(աղ. 7)

Վերոբերյալ օրինակները (աղ. 1-6) ցույց են տալիս, որ Մեկնության մեջ Վարդան Արևելցին կիրառել է իր ժամանակ շրջանառվող «Երգ երգոց»-ի հնարավոր բոլոր տարբերակները՝ մեկնությունները **հարմարեցնելով** բնագրին՝ անպայմանորեն օգտվելով նաև Գրիգոր Նարեկացու Մեկնության մեջ պահպանված բնաբանային հատվածներից:

Ուշադրության արժանի ենք համարում աղյուսակ 7-ի երրորդ սյունակի՝ «Երգ երգոց»-ի «Առաքումն քո դրախտ նունենեաց կամ պատգամաւորութիւն քո հանդերձ նարդոսիւ» (33բ) մեջբերումը, որտեղ նույն բնաբանի երկու ընթերցումներ միատեղված են (աղ. 7): Առայժմ հնարավոր չէ պատասխանել այն հարցին՝ Արևելցի³⁷ն է արդյոք միացրել նույն բնաբանի երկու ընթերցումները մեկ քաղվածքի մեջ ըստ պահանջի³⁷, թե իր ձեռքի տակ եղած գաղափար օրինակից

³⁵ Հետաքրքիր ընթերցում ունի Երզնկայի Աստվածաշունչը. «Եղբարորդին իմ ձգեաց զձեռն իւր ի **հնձան**», 397բ:

³⁶ Նույն տեղում, 397բ:

³⁷ Բնագրում չակետով:

է բխում նման մոտեցումը³⁸, քանի դեռ չեն ամբողջացվել «Երգ երգոց»-ի մեզ հասած բոլոր բնագրերն ու տարբերությունները:

Նման մի օրինակ է նաև Վարդան Արևելցու Մեկնության մեջ «Երգ երգոց»-ի Դ. 4 հատվածի գլխավոր բնաբանը, որտեղ մի քանի ընթերցումներ կողք կողքի են դրված. «Հազար վահան կախեալ զնմանէ եւ ամենայն աշտեայք կամ նետք զաւրաւորաց կամ սպառազինաց»³⁹ (26բ): Հատվածս նույնությամբ առկա է Վիեն. 55 Աստվածաշնչի մեջ⁴⁰ («Երգ երգոց»՝ 349ա-351ա):

Այս երևույթը բացատրում է Հ. Ոսկյանը. «...Թերավարժ թարգմանիչը յոյն բառերու համապատասխան հայերէն որոշ բառերու ընտրութիւն ընելու մէջ կը տատամսի եւ այս պատճառաւ բառերու կուտակում մը կը փորձէ, որպէս զի ետքէն սրբագրիչը քով քովի դրուած բառերէն մին կամ միւսն ընտրէ եւ մնացածները ջնջէ»⁴¹:

Եթե բովանդակային առումով Վարդան Արևելցու Մեկնության հիմնական աղբյուրն ու ուղենիշը Գրիգոր Նյուսացու Մեկնությունն է⁴², ապա կառուցվածքային առումով նա շարունակում է «Երգ երգոց»-ի նարեկացիական ավանդույթը՝ իր երկի վերջում զետեղելով միայն հայկական կանոնին բնորոշ «Գիտացի, զի...» հատվածի մեկնությունը⁴³: Մեկնության մի քանի հնագույն ընդօրինակություններ (ՄՄ 4834, 5259, 1161, 5747, 3342 և Վնտկ. 1361, 1121, 1368) որպես վերջաբան ունեն այս հատակտորի Վարդան Արևելցու Մեկնությունը⁴⁴: Հեղինակն այս հատակտորն իր երկի մեջ մուծել է վստահաբար Գրիգոր Նարեկացու Մեկնության ազդեցությամբ՝ հարազատ մնալով «Երգ երգոց»-ի մեկնության նա-

³⁸ Հետաքրքիր այս հարցի առնչությամբ մի կարևոր ուսումնասիրության վրա (C. E. Cox, *Aquila, Symmachus and Theodotion in Armenia* (Society of Biblical Literature), Atlanta, Georgia: Scholars Press, 1996) մեր ուշադրությունը հրավիրեց Գոհար Մուրադյանը, որին խորին շնորհակալություն եմ հայտնում: Մտադիր եմ հետազայում այսօրինակ ընթերցումների շարքը համարել նոր օրինակներով:

³⁹ Հմմտ. *Ձոհրապեան Աստուածաշունչ*, էջ 461, նման՝ *Երզնկայի Աստուածաշունչ*՝ «Հազար վահան կախեալ են զնմանէ, եւ ամենայն նետ սպառազինաց», 397բ:

⁴⁰ Հմմտ. Հ. Ոսկեան, *Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանությունը*, էջ 56: Յուցակ հայերէն ձեռագրաց մատենադարանին Մխիթարեանց ի Վիեննա, կազմեց՝ Հ. Յակովբոս վ. Տաշեան Մխիթ. ուխտէն, Վիեննա 1895, էջ 255:

⁴¹ Հ. Ոսկեան, *Երգ երգոցի առաջին եւ երկրորդ թարգմանությունը*, էջ 11:

⁴² Առանց բացառության բոլոր դեպքերում հեղինականիշ առաջին հղումն ու ամենաձավալուն մեկնողական հատվածներն այս հեղինակից են:

⁴³ *Վարդան Արևելցի, Ճառք և ներբողեանք*, աշխատասիրությամբ Հ. Քյոսեյանի, Երևան, 2000, էջ 113-121:

⁴⁴ Այս բնագրին անդրադարձել եմ առանձին հոդվածով և ցույց տվել, որ այն ոչ թե Տոնապատնադի մաս կազմող Վարդան Արևելցու առանձին ճառ է, ինչպես ժամանակին դիտարկվել է, այլ «Երգ երգոց»-ի իր իսկ Մեկնության շարունակությունը, Լ. Հովսեփյան, «Երգ երգոցի «Գիտացի զի...» սկսվածքով հատվածը և Վարդան Արևելցու մեկնությունը», *Հայագիտական հանդես*, 2023, 2 (61), էջ 37-47:

րեկացիական ավանդույթին: Սակայն Արևելյան Մեկնության մեջ «Գիտացի, զի...» հատվածը զետեղված է արդեն իր բուն Մեկնությունից հետո՝ առանձին⁴⁵: Մեկնության շարադրանքից այնպիսի տպավորություն է ստեղծվում, թե հեղինակային պատկանելության հարցն անհանգստացրել է Արևելյուն, և նա ստիպված է հատվածի ձևաբովանդակային քննություն անել՝ ապացուցելու համար, որ այս հյուսվածքի հեղինակն իսկապես Սողոմոն Իմաստունն է: Մի կողմից Գրիգոր Նարեկացու Մեկնությամբ ավանդված բնագիրը, իսկ մյուս կողմից արդեն շրջանառվող և էական փոփոխություններով ներկայացող բնագիրն ստիպում են մեկնիչին տալ հետևյալ բացատրությունը. «Բանքս այս (իմա՝ «Գիտացի, զի...»), որ հանեալ եղեւ ի սեղան հանդիսաւոր սրտից ձերոց, թէպէտ եւ ոչ երեւի ի բնագիրսն Սաղոմոնի, սակայն առանց կարծեաց եւ հարազատ Սաղովմոնի է, եւ յերգս երգոյն կոչելոյ: Նախ՝ ի նկարագրէն իմանալ, զի կարի նման է, եւ ապա ի յարանց սրբոց, որք առեալ են ի վկայութիւն..., ուստի յայտ է, թէ յայլմէ յումեքէ պահեցաւ⁴⁶ եւ այս յազդմանէ Հոգւոյն՝ ի խնդութիւն հարսին եկեղեցւոյ, ի նիւթ աստուածաբանութեան եւ ի դաստիարակութիւն վարժից կրթութեան ուսումնասէր մտաց, որ ասէ այսպէս»⁴⁷:

Ստորև՝ «Գիտացի, զի...» սկսվածքով բնագրի համեմատական աղյուսակը.

ԳՐԻԳՈՐ ՆԱՐԵԿԱՅԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆ, էջ 768-71	ԵՐԶՆԿԱՅԻ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ Եղմ. 1925, 396բ	ՎԱՐԴԱՆ ԱՐԵՎԵԼՅԻ Հաւաքումն մեկնութեանց... ՄՄ 5259, 80ա-2ա	ԶՈՀՐԱՊԵԱՆ ԱՍՏՈՒԱԾԱՇՈՒՆԶ, էջ 463
ԷԿԼԵՍԻԱՍՏԵՍ Գիտացի, եթէ մարմին զարացու- ցանէ զմանկութիւն: Բարձրացուցէ ի շտեմարանս մեր: Թագաւոր մեր ի գահոյս իբրեւ արմաւ	ԷԿԼԵՍԻԱՍՏԵՍ [Գ]իտացի, զի մարմին սբաւ- սացուցանէ ց[ղարձ- րած՝ մ]անկութիւն եւ զմանկութիւն. բարձ- րացուցանէ ի գահոյս մեր թագաւոր մեր	ԱՍԱՅՈՒԱԾ Է. Գիտացի, զի մարմին զբա- սացուցանէ զմանկութիւն եւ բարձրացուցանէ զշտեմարանս. Թագաւոր մեր ի գա-	ԱՅԼՈՒՍ ԻՄՆ ԳՏԵԱԼ Ի ՍՄԻՆ ԵՐԳՈՅ Օրիորդքն եւ թագուհիքն ասեն. Գիտացի զի մարմին զբօսացուցանէ զման- կութիւն բարձրացուցէ ի

⁴⁵ Երգնկայում գրված ՄՄ 5259 ձեռագիրն այս հատվածի համար ունի լուսանցային հետևյալ նշումը. «Ասացուած է», էջ 82ա: Տարբեր ընդօրինակություններում այս հատվածների միջև միշտ հիշատակարան է դրվել:

⁴⁶ Թվում է՝ Զոհրապյան Աստվածաշնչի «Այլուստ իմն գտեալ» խորագիրը կապ ունի Վարդան Արևելյու այս ակնարկի հետ:

⁴⁷ ՄՄ 5259, 82աբ:

ոսկեղէն զմոսալից: Դարձցի թագաւորն անդրէն ի ման- կութիւն: Սիրելին ի սենեակ իւր: Երգեցէք զսէրն: Ես իսկ եմ ի սաղմոսարանին: Եր- գեցից ընդ ընկերս իմ: Երգեսցուք եւ ուրախ լիցուք ի թագաւոր սիրելի: Թէպէտ եւ ծածկեսցուք ի տեսլենէ, աչք մեր յիսնաւորք: Տէր արար զքեզ եւ հաս- տատեաց զքեզ: Պատրաստեաց զքեզ յարգանդէ, գեղե- ցիկդ ի կանայս, մայր քո: Մնցի մարմին առ նոյն անխիղճ, անաղտ յայլմէ տես- չութենէ: Զի այսպէս ունէր: Եւ կայր այս յարհ- նութիւն աւրհնութեանցն: Երգ երգոց, որ է Սողոմոնի Համբուրեսցէ...	որպէս արմաւ ոսկեղէն զմոսալից, լցցին տաշտք, դարձցի թագաւորն անդրէն ի մանկու- թիւն, սիրելին ի սենեակ մեր. Երգեսցուք զսէր. ես իսկ եմ ի սաղմոսարանին. Երգեցից ընդ ընկերս իմ. եկեսցուք եւ ուրախ լիցուք թագաւոր սիրելի. թէ- պէտ եւ ծածկեցաք ի տեսլենէ, աչք մեր յիսնաւորք. Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդի, գեղեցիկ ի կանայս մայր քո, ծնցի մարմին անխեղճ (գրչից՝ «մեղա՛ Տեառն»): Առ նոյն երբեմն կայր սա ի յերգս երգոց: Աւրհնութիւն աւրհ- նութեանց, որ է Սողոմոնի. Հարսն. [Հ]ամբուրեսցէ...	հոյս մեր իբրեւ զարմաւ ոսկեղէն զմոսալից ցցին տաշտք մեր: Դարձցի թագաւորն անդրէն ի ման- կութիւն, սիրելին ի սենեակ իւր, որոյ երգեցից զսէրն: Ես իսկ եմ ի սաղմոսա- րանին, երգեցից ընդ ընկերս իմ, երգեսցուք եւ ուրախ լիցուք թագաւոր սիրելի: Թէպէտ ծածկեցաք ի տեսլենէ, աչք մեր յսնաւորք. Տէր արար զքեզ, հաս- տատեաց զքեզ [պատրաստեաց զքեզ] յարգանդէ, գեղեցիկ ի կանայս մայր քո, ծնցի մարմին անխեղճ: Մեկնութիւն...	շտեմարանս իւր: Թագաւոր մեր ի զահոյս մեր: Իբրեւ արմաւ ոսկեղէն զմոսալից ցցին տաշտք մեր: Դարձցի թագաւորն անդրէն ի մանկութիւն: Սիրելին ի սենեակս մեր. Երգեսցուք զսէրն: Փեսայն ասէ. ես իսկ եմ ի սաղմոսարանին. Երգեցից ընդ ընկերս իմ: Երգեսցուք եւ ուրախ լիցուք: Հարսնն եւ զստերքն եւ օրիորդքն ասեն. Թագաւոր սիրելի, թէ- պէտ եւ ծածկեցաք ի տեսլենէ, աչք մեր յսնաւորք: Տէր արար զքեզ, հաստատեաց զքեզ, պատրաստեաց զքեզ յարգանդէ, գե- ղեցիկդ ի կանայս. մայր քո ծնցի մարմին անտրիւնեղծ: Առ նոյն՝ յայլմէ տեսչութենէ, զի այսպէս ունէր: Երգ երգոց (բնագրի ավարտն ազգարարող խորագիր):
--	---	---	--

Այսպիսով, Վարդան Արևելցին իր ծաղկաքաղ Մեկնությունը հյուսելիս օգտ-վել է Գրիգոր Նարեկացու Մեկնությունից, որի միջոցով հեղինակին հասանելի է եղել «Երգ երգոց»-ի ավելի հին՝ փութանակի թարգմանության հետքեր ունեցող բնագիրը: Նրա ազդեցությամբ Վարդան Արևելցին իր երկի վերջում գետեղում է միայն հայկական կանոնին բնորոշ «Գիտացի, զի...» հատվածի մեկնու-

թյունը: Այս Մեկնությունն բնաբանային քաղումներն ու տարընթերցումները ցույց են տալիս, որ Գրիգոր Նարեկացու երկի մեջ պահպանված բնագրի համեմատ՝ արդեն ԺԳ դարում «Երգ երգոցն» էական փոփոխությունների էր ենթարկվել, և այդ իրողության կարևորությունն ընկալելով՝ Վարդան Արևելցին Մեկնությունն մեջ է ընդգրկում շրջանառվող «Երգ երգոց»-ի (և «Գիտացի, զի...» հատվածի) բոլոր տարընթերցումները՝ համապատասխան մեկնություններով:

Գրիգոր Նարեկացու Մեկնության ոչ բոլոր քաղումների անվանաբար հիշատակությունը Վարդան Արևելցու երկի մեջ բխում է մեծավ մասամբ «Երգ երգոց»-ի մի քանի տարընթերցումների մեկնիմաստներ համատեղելու մտահոգությունից:

Կրիիկյան կրթամշակութային միջավայրի հետ սերտ կապեր և գիտական բազմաճյուղ հետաքրքրություններ ունեցող Վարդան Արևելցին կարևորում է Աստվածաշնչի «Երգ երգոց»-ի թարգմանությունների գոյության փաստը: Նա ի մի բերելով, ներդաշնակելով մեկ միասնական մեկնողական բնագրում ո՛չ միայն «Երգ երգոցի» հայերեն թարգմանության տարընթերցումները, այլև այս տարընթերցումներից, ինչպես նաև տարբեր հեղինակների ըմբռնումից բխող մեկնությունները՝ փորձել է հաղթահարել բուն «Երգ երգոցի» բնագրի թարգմանությունների զգալի տարբերություններն ու կառուցվածքային անհարթությունը և ստեղծել մի համապարփակ բնագիր-մեկնություն:

LILIT HOVSEPYAN

THE TEXT OF THE “SONG OF SONGS” ACCORDING TO THE EXCERPTS FROM GRIGOR NAREKATS’I IN THE COMMENTARY OF VARDAN AREWELTS’I

Keywords: Bible of Erzinka, pre-Cilician recension, copy, variant reading, Vardan Arewelts’i, authorial attribution, lemma, florilegal commentary, “Song of Songs,” Grigor Narekats’i.

In 1265, at Haghpat, Vardan Arewelts’i wrote a commentary on Solomon’s “Song of Songs,” interweaving both lemmas and authorial excerpts from the commentaries of Gregory of Nyssa, Origen of Alexandria, Grigor Narekats’i, and Hippolytus of Bostra.

Through Grigor Narekats’i’s Commentary, Vardan Arewelts’i accessed an older text of the “Song of Songs,” which preserved traces of the oldest “hastily” executed translation, as Movsēs Khorenats’i refers to it. Influenced by this Commentary, he also included, at the end of his work, a commentary on the original passage “I knew that...” which is distinctive to the Armenian canon only.

The fact that not all of Grigor Narekats'i's excerpts are explicitly cited by name in Vardan Arewelts'i's commentary suggests that these omissions are not merely the result of scribal errors (though such occur), but rather reflect a deliberate concern to reconcile the interpretations of different text variants of the "Song of Songs."

The study demonstrates that the texts of the "Song of Songs" employed in Narekats'i's Commentary and in Vardan Arewelts'i's Commentary differ substantially. Recognizing the significance of this, and following Grigor Narekats'i, Vardan Arewelts'i renders all the textual variants of the "Song of Songs" (including the "I knew that..." passage) circulating in his era.

The variant readings of the same lemmas within the Commentary indicate that, even in Vardan Arewelts'i's time, a single, standardized text of the Bible had not been adopted. Compared with Grigor Narekats'i's Commentary (977), by the 13th century the "Song of Songs" had already undergone considerable modifications.

The interpreter endeavours to reconcile the substantial textual divergences and structural unevenness of the "Song of Songs" by incorporating the variant readings into the exegetical framework, thereby uniting the previously separately copied and independently "living" exemplars into a single, coherent text and commentary.

The variant readings cited by Vardan Arewelts'i are particularly significant: most are not represented in the Zohrapian Bible and may contribute to the identification of older text of the "Song of Songs" that remained in circulation until the 13th century.

ЛИЛИТ ОВСЕПЯН

ТЕКСТ "ПЕСНИ ПЕСНЕЙ" ПО ВЫДЕРЖКАМ ИЗ ГРИГОРА НАРЕКАЦИ В ТОЛКОВАНИИ ВАРДАНА АРЕВЕЛЦИ

Ключевые слова: Библия Ерзнки, докиликийская редакция, копия, разночтение, Вардан Аревелци, авторская атрибуция, лемма, катена, «Песнь песней», Григор Нарекаци.

В 1265 году Вардан Аревелци в Ахпате составил толкование к «Песни песней» Соломона, переплетя леммы с фрагментами из толкований Григория Нисского, Оригена, Григора Нарекаци и Ипполита Бострийского.

Благодаря толкованию Григора Нарекаци Вардан Аревелци получил доступ к более древнему тексту «Песни песней», сохранившему следы первого, «поспешного» перевода, как его характеризует Мовсес Хоренаци. Под влиянием этого Толкования он также включил в заключение своего труда ком-

ментарий к оригинальному пассажи «Я знал, что...», характерному исключительно для армянского канона.

Тот факт, что в толковании Вардана Аревелци не все отрывки Григора Нарекаци прямо цитируются с указанием его имени, позволяет предположить, что эти пропуски являются не столько результатом ошибок переписчиков (хотя и такие встречаются), сколько отражением преднамеренной попытки примирить толкования разных вариантов текста «Песни песней».

Исследование показывает, что тексты «Песни песней», использованные в толковании Нарекаци и в толковании Вардана Аревелци, существенно различаются. Осознавая важность этого и следуя Григору Нарекаци, Вардан Аревелци приводит все варианты текста «Песни песней» (включая отрывок «Я знал, что...»), циркулировавшие в его эпоху.

Разночтения идентичных лемм текста «Песни песней» в толковании свидетельствуют о том, что даже во времена Вардана Аревелци не существовало единого стандартизированного текста Библии. По сравнению с толкованием Григора Нарекаци (977), к XIII веку «Песнь песней» уже претерпела значительные изменения. Толкователь стремится примирить существенные текстовые расхождения и структурную неравномерность «Песни песней», включая разночтения в единой экзегетической системе, тем самым объединяя ранее отдельно переписанные и независимо «живущие» экземпляры в единый связный текст и комментарий.

Разночтения, приведённые Варданом Аревелци, особенно важны: большинство из них не представлены в Зограбянской Библии и могут способствовать выявлению более древних текстов «Песни песней», которые оставались в обращении до XIII века.